ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ARMENIAN TERRITORIAL DEVELOPMENT FUND

N Շ/01/2199-25 «15» 07 2025թ.

«ՓԱՐՍ ԹԱԲԼՈ» ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՄԵՀԴԻ ՄԻՐԶԱԻ ԲԱՐԱՆԼԱՂԻԻՆ

«ՓԱՐՍ ԹԱԲԼՈ» ՓԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ
ՀԱՄԻԴՌԵԶԱ ՔԱԹՈՒՋՅԱՆ ԱՍՂԱՐԻԻՆ

Հարգելի գործընկերներ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Փարս Թաբլո» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2024 թվականի օգոստոսի 16-ին կնքվել է «ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման» թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/60-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ կառավարությունը 2025 թվականի հունիսի 12-ին ընդունել է «Գնման պայմանագրի շրջանակներում համաձայնագիր կնքելու թույլտվություն տալու մասին» թիվ 764-Ա որոշումը (այսուհետ Որոշում), որի 1-ին կետով Պատվիրատուին թույլատրել է՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք և Նոր Գյուղ բնակավայրերի միջնակարգ դպրոցի կառուցման նպատակով 2024 թվականի օգոստոսի 16-ին «Փարս Թաբլո» ՓԲԸ-ի հետ կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների գնման N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/60-1 պայմանագրի շրջանակներում համաձայնագիր կնքելու նպատակով՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրը «Փարս Թաբլո» ՓԲԸ-ին տրամադրել նոր ծանուցում՝ կապալառուի կողմից ապահովումների ներկայացման համար սահմանելով քսանօրյա ժամկետ:»:

Համաձայն Որոշման 2-րդ կետի Պատվիրատուին հանձնարարվել է՝ Որոշման 1-ին կետով սահմանված ժամկետում «Փարս Թաբլո» ՓԲԸ-ի կողմից ապահովումներ

չներկայացվելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը միակողմանիորեն լուծել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարությունը 2025 թվականի հունիսի 12-ի թիվ 764-Ա որոշման դրույթները՝ Պատվիրատուի կողմից Կապալառուին է ներկայացվել ծանուցում, որով առաջարկվել է սահմանված ժամկետում Պատվիրատուին ներկայացնել ծանուցմանը կից ուղարկված համաձայնագիրը՝ հաստատված երկու օրինակից, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները, որը սակայն Կապալառուի կողմից չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Որոշման 2-րդ և Պայմանագրի 8.13-րդ կետերով՝ 2025 թվականի հուլիսի 15-ից Պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված:

Միաժամանակ հայտնում ենք, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 16-րդ և 27-րդ ենթակետերով սահմանված կարգավորումները՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ին Պատվիրատուի և Կապալառուի միջև կնքված թիվ 1 համաձայնագրի շրջանակներում Կապալառուի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 11-ին ներկայացված 41,662,271 ՀՀ դրամի չափով պայմանագրի և 83,324,543 ՀՀ դրամի չափով որակավորման ապահովումները վերադարձման ենթակա չեն և պետք է գանձվեն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**

Invalid signature

X

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝ Գայանե Քարիմյան

Իրավաբանական վարչության, Իրավական ապահովման
և խորհրդատվության բաժնի պետ
հեռախոս՝ 010 24 71 23 (154), էլ. հասցե՝ gkarimyan@wsdp.am